Այս Պողոսի աղբիւրի մօտ խիտ ծառերի մէջ տեսինք հին գերեզմանատուն բաւական տարածութեամբ, ուր մի քանի գերեզմանաց վրայ կարդացինք.

«Այս է Տապան Խաչատուր վարդապետի. թվ. Զժ. 1261։

«Այս է Տապան Ստեփաննոս քահանայի թվ. ՉԻԵ. 1276։

Եւ ուրիշ շատ տապանագրեր, զորս Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսն եւս կարդացել է։ Տես յերես 176։

Այսպէս ընդարձակ է և Խաչ-Մաս գիւղի գերեզմանատունը, ուր թաղուած է Աղուանից Սենեքերիմ թագաւորի մարմինը՝ ըստ աւանդութեան երկրացւոց, ուր և գնացինք նախքան Դարբանդ գնալնիս, Ղուբայ եղած միջոցներիս։

Ըստ աւանդութեան տեղացւոց, Խաչ-Մասի, Մօլլա Խալիլի և գաւառի միւս գիւղերի Հայ ժողովուրդը հեռացեալ Խանների ձեռքից փախչելով՝ անցել գնացել են Ղզլար, Մոզտոք, Պետրովսկի, Պետիկօրսկի և ուրիշ քաղաքներ, ինչպէս և Դարբանդ, որպէս և Սարգիս եպիսկոպոսն վկայէ. տես վերեւ։

Ս. Գրիգորիսի և Նորա մատրան պատմութիւնը և նկարագրութիւնը պարզաբանելոյ համար գնում եմ այս տեղ յարգոյ ուսուցիչ պ. Յարութիւն[1] Մարաղեանցի գրած յօդուածը, զոր տպել է Նոր-Դար օրագրի խմբագիրը (1891, թիւ 1,3 և 5) և ահա հետեւեալն է։

«Մօլլախալիլ գիւղը Բիլիջի գիւղից մօտ 4 վերստ և քաղաքից մօտ 27 վերստ հեռաւորութիւն ունի և գտնվում է Դերբէնդից (Ճորայ-գանից) դէպի հարաւ, բաղկացած է 15 տնից, բոլորն էլ Զիա գաւանութեան։ Մի ժամանակ այդ գիւղը եղել

[1] Վարժապետ Յարութիւնին 1892 թուի օգոստոսին Ձեռնադրեցի Շամախւոյ եկեղեցւոյ համար քահանայ՝ ըստ խնդրանաց ժողովրդեան, անուանելով նրան Տաճատ քահանայ։